**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 18.03.2022թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

## թիվ ԳԲՔԱ-LO-2022/21

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ

Բողոք բերող՝ «Լեբեն» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԶՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-09/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, հյուսվածքաբանական հետազոտության ծառայության ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Լեբեն» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 17.02.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հյուսվածքաբանական հետազոտության ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-09/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 01.02.2022թ.-ի թիվ 1 և 08.02.2022թ.-ի թիվ 2 արձանագրություններով ընդունված որոշումները և չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 17.02.2022թ.-ին:

18.02.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/21 համարի ծածկագիրը:

02.03.2022թ.-ին և 18.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 02.03.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 18.03.2022թ.-ին:

## 2. «Լեբեն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Լեբեն» ՍՊԸ-ն 17.02.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

*««Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «հյուսվածքաբանական հետազոտության ծառայության» ձեռքբերման նպատակով (միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) 73111200, ըստ հրավերի) հայտարարվել է ՀՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-09/22 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):*

*Ընթացակարգի հայտերի բացումը եղել է www.armeps.am համակարգի միջոցով 08 փետրվարի 2022 թվականին ժամը 11:00-ին:*

*«ԼԵԲԵՆ» ՍՊԸ-ն ներկայացրել է ՀՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-09/22 ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ:*

*ՀՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-09/22 ծածկագրով ընթացակարգի հրավերը «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից 01 փետրվարի 2022 թվականին հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում (Հայտարարության տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 1-ի թիվ 1 որոշմամբ), սակայն «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ»*

*ՓԲԸ-ի կողմից (14.12.2021թ. ստորագրված) 15 դեկտեմբերի 2021 թվականին հրապարակված գնումների պլանում ներառված չէ վերոնշյալ գնման առարկան և 01 փետրվարի 2022 թվականի դրությամբ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից չի կատարվել գնումների պլանի փոփոխություն:*

*ՀՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-09/22 ծածկագրով ընթացակարգի 08 փետրվարի 2022 թվականին ժամը 11:00-ի Թիվ 2 արձանագրության 7.1 կետի համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել Վարդան Դաբաղյան Ռազմիկի Ա/Ձ-ն, 7.2-ի համաձայն՝ հաստատվել է պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը և 7.3 կետի համաձայն անգործության ժամկետ է սահմանվել 5 օրացուցային օր:*

*«Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք)՝ մասնավորապես.*

*Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.*

*Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:*

*Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:*

*Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:*

*Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշում¬ները գնումների բողոքարկման խորհրդին:*

*Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:*

*Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.*

*ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,*

*բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,*

*գ. փոփոխելու ընդունված որոշումները.*

*Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:*

*Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:*

*ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ մասնավորապես.*

*Կարգի 16-րդ կետի համաձայն՝ Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:*

*Կարգի 17-րդ կետի համաձայն՝ Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:*

*Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:*

*Այսպիսով, «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ՀՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-09/22 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել՝ պայմանագիր կնքել ընտրված մասնակցի հետ, սակայն «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ՀՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-09/22 ծածկագրով գնման ընթացակարգով նախատեսված «հյուսվածքաբանական հետազոտության ծառայության» ձեռքբերման գնման պահանջը գոյություն չունի:*

*Ստացվում է 01.02.2022թ. «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ն գոյություն չունեցող գնման պահանջի համար gnumner.am կայքում հրապարակում է ՀՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-09/22 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը և 08.02.2022թ. ՀՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-09/22 ծածկագրով գնման ընթացակարգի Թիվ 2 արձանագրությամբ որոշում է կայացվում գնման պահանջ չունեցող գնման առարկայի համար կնքել պայմանագիր:*

*Վերոնշյալով պայմանավորված՝ գտնում ենք, որ ՀՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-09/22 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է ընթացակարգը հայտարարի չկայացած, ցանկության դեպքում կրկին հայտարարի գնման ընթացակարգ՝ Օրենքի և Կարգի պահանջներին համապատասխան, քանի որ ՀՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-09/22*

*ծածկագրով գնման ընթացակարգը և գնահատման նիստը իրավազոր չեն և չեն համապատասխանում Օրենքի և Կարգի պահանջներին:»:*

Ելնելով վերոգրյալից, «Լեբեն» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հյուսվածքաբանական հետազոտության ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված «ԶՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-09/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 01.02.2022թ.-ի թիվ 1 և 08.02.2022թ.-ի թիվ 2 արձանագրություններով ընդունված որոշումները և չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

**3. <u>«Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 18.02.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/2941-2022 գրությամբ դիմել է «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Լեբեն» ՍՊԸ-ի կողմից 17.02.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով պահանջված փաստաթղթերը և վերջինիս գրավոր դիրքորոշումը:

**4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2022/21 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հյուսվածքաբանական հետազոտության ծառայության ձեռքբերման նպատակով 01.02.2022թ.-ին հայտարարվել է «ԶՄՄԱԲԿ-

ԳՀԱՊՁԲ-09/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 01.02.2022թ.-ի թիվ 1 որոշմամբ, իսկ հայտերի բացման նիստի օր է սահմանվել 08.02.2022թ.-ին ժամը 11:00-ն ներառյալ:

iii. Ընթացակարգի հրավերի թիվ 6 հավելվածով սահմանված պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում հյուսվածքաբանական հետազոտության ծառայությունը (հետազոտվող նյութի քանակը 1-ից 5 կտոր), գումարը նշված է՝ 0, քանակը 240 և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 73111200, իսկ 2-րդ չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում հյուսվածքաբանական հետազոտության ծառայությունը (հետազոտվող նյութի քանակը 6 և ավել կտոր), գումարը նշված է՝ 0, քանակը 25 և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 73111200:

iv. www.armeps.am/PPCM/ կայքում առկա «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի 01.02.2022թ.-ին հրապարակված 2022 թվականի գնումների պլանի համաձայն՝ Ընթացակարգով սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով 1-ին չափաբաժնի համար նշվել է (73111200/1) ապրանքի համար նախատեսված քանակը նշվել է՝ 240, ընդհանուր գումարը՝ 1 200 000 ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնի համար՝ նշվել է (73111200/2), ապրանքի համար նախատեսված քանակը նշվել է՝ 25, ընդհանուր գումարը՝ 200 000 ՀՀ դրամ:

v. «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից 15.12.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է 2022 թվականի գնումների պլանը:

vi. www.gnumner.am կայքում մինչև 01.02.2022թ.-ը առկա տվյալների համաձայն՝ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հրապարակված 2022 թվականի գնումների պլանում բացակայում է «ԶՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-09/22» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգով ձեռքբերվելիք գնման առարկան՝ համապատասխանաբար սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդերով:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Լեբեն» ՍՊԸ-ի կողմից 17.02.2022թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում,

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը),

3) պայմանագրի կնքում,

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերի դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ գնման գործընթացը, Օրենքի իմաստով, գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը: Իսկ արդեն Կարգով ՀՀ կառավարությունը սահմանել է, որ՝ գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է և գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում, անփոփելով, նշել, որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Այսինքն՝ գնման գործընթաց սկսելու համար անհրաժեշտ է որպեսզի գնման առարկան ներառված լինի գնումների պլանում, համապատասխան ստորաբաժանման կողմից հաստատվի և գնումների համակարգողին ներկայացվի գնման հայտ, ձևավորվի հանձնաժողով, որը հաստատում է հրավերը և հրապարակում պաշտոնական տեղեկագրում, որի դեպքում է գնման գործընթացը համարվում սկսված:

Հակառակ դեպքում ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ **օրենքի նպատակին, սկզբունքներին և գործողության ոլորտին** նվիրված 3-րդ հոդվածի կարգավորման ընդհանուր համատեքստը, ինչի արդյունքում կայացված ցանկացած որոշմամբ կխախտվեն գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքներն ու գնումների մասին ՀՀ օրենսդրության նպատակը:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով:

Վերոնշյալ դրույթների վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառվի գնումների պլանում՝ առանց գնման ընդհանուր գումարի նշման: Այս կարգով է միայն հնարավոր փաստել և հաստատված համարել գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքի՝ գնումների պլանի առկա լինելու հանգամանքը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հյուսվածքաբանական հետազոտության ծառայության ձեռքբերման նպատակով 01.02.2022թ.-ին հայտարարված «ԶՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-09/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 6 հավելվածով սահմանված պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում հյուսվածքաբանական հետազոտության ծառայությունը (հետազոտվող նյութի քանակը 1-ից 5 կտոր), գումարը նշված է՝ 0, քանակը 240 և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝

73111200, իսկ 2-րդ չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում հյուսվածքաբանական հետազոտության ծառայությունը (հետազոտվող նյութի քանակը 6 և ավել կտոր), գումարը նշված է՝ 0, քանակը 25 և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 73111200: www.armeps.am/PPCM/ կայքում առկա «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի 01.02.2022թ.-ին հրապարակված 2022 թվականի գնումների պլանի համաձայն՝ Ընթացակարգով սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով 1-ին չափաբաժնի համար նշվել է (73111200/1) ապրանքի համար նախատեսված քանակը նշվել է՝ 240, ընդհանուր գումարը՝ 1 200 000 ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնի համար՝ նշվել է (73111200/2), ապրանքի համար նախատեսված քանակը նշվել է՝ 25, ընդհանուր գումարը՝ 200 000 ՀՀ դրամ: «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից 15.12.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է 2022 թվականի գնումների պլանը: www.gnumner.am կայքում մինչև 01.02.2022թ.-ը առկա տվյալների համաձայն՝ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հրապարակված 2022 թվականի գնումների պլանում բացակայում է «ԶՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-09/22» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգով ձեռքբերվելիք գնման առարկան՝ համապատասխանաբար սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդերով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԶՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-09/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը կազմակերպվել և գնման գործընթացը սկսվել է առանց իրավական հիմքի, ինչի արդյունքում Պատվիրատուի կողմից թույլ է տրվել Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև Կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Լեբեն» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման՝ գնման ընթացակարգը պետք է հայտարարել չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

**Ո Ր Ո Շ Ե Ց**

«Լեբեն» ՍՊԸ-ի կողմից 17.02.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/21 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հյուսվածքաբանական հետազոտության ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված «ԶՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-09/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել 01.02.2022թ.-ի թիվ 1 և 08.02.2022թ.-ի թիվ 2 արձանագրություններով ընդունված որոշումները և չկայացած հայտարարել գնման ընթացակարգը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**